



Զահրատ

Անպտուղ սալորենին

Սալորենին որ գարնան պտուղ չտուալ

Ամչցալ

Տխուր նայեցալ իր տերեւներուն

Իր լերկ ճիւղերուն

Ու լացալ

Եւ լաճերը թաղին պտուղի գող

Ոչ մէկ քար նետեցին

Արհամարհանքով ծառին նայեցան

Ու գացին

Այդպէս լքուած ու այդպէս առանձին

Սալորենին

Անոնց ետեւէն նայեցալ կարօտով

Ու լացալ

Եւ Պարոնները Տիկիները թաղին

Չնշմարեցին

Հէք սալորենին

Որ այդպէս անպէտ այդպէս յանցաւոր

Լացալ

Միայն կատու մը սեւ շուքի բարեկամ

Արեւի նման դեղին աչքերով

Երկար նայեցաւ սալորենիին

Ու տուն տեղ եղաւ

Չորս հատ ձագ բերաւ ծառին ստուերին

Հիմա սալորենիին

Խանդով կ'երկարէ իր գով հովանին

Որ ձագուկներն ամրան կիզիչ արեւէն

Չըլլայ թէ այրին